ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից
հասարակական խորհրդի նախագահ
պարոն Սերգո Կարապետյանին

Նունե Մանուկյան-ից
(դիմողի անուն, ազգանուն)

ք. Երևան, [illegible] 091204760
(բնակության վայր, հեռախոսի համար, էլ.փոստի հասցե)
nune.manukyan@gmail.com

«Արենի» [illegible] հիմնադրամ
(կազմակերպության լրիվ անվանումը, պետ.գրանցման համարը)
N 03 Ա 173 710

ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն Կարապետյան,

Խնդրում եմ «Արենի» [illegible] հիմնադրամ ընդգրկել ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում:

Կից ներկայացնում ենք պահանջվող փաստաթղթերը.

1. կազմակերպության կանոնադրության պետ. գրանց. համարը
2. հիմնադրամի [illegible] անձնագրի պատճենը
3. Ներկայացուցչի լիազորության [illegible]
4. Անձնական [illegible]
5. [illegible] վերջին [illegible] ԳՆ նախարարության [illegible]
6. փորձառության

Դիմող՝ (ստորագրություն, անուն, ազգանուն)
Նունե Մանուկյան

<03> 05 2016 թ.

ՀՀ Գյուղ. Նախ.
Վարչատնտեսական վարչություն
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
03 05 2016 թ.
Մուտք N Ա/5256-16

կազմված է «08» ապրիլի 2015թ.
Բաղկացած է 2 էջից
Տպագրված է ընդամենը 3 օրինակ
ՕՐԻՆԱԿ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԱՐԵՆԻ» ՓԱՌԱՏՈՆ»

հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի «08» ապրիլի 2015թ. որոշմամբ
(արձանագրություն թիվ 3)

Տնօրեն՝
Ն. Մանուկյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
13.06.2011թ.
գրանցման թիվ 222.160.23710
վկայական 03 Ա 173710
ՀՎՀՀ 02600057
13.06.2011թ. գրանցված կանոնադրության
թիվ 002.3 փոփոխությունը գրանցված է
Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
գործակալության կողմից

"30" 04 2015թ.

Պետական ռեգիստրի գործակալության պետ՝
Կ.Ադամյան

«ԱՐԵՆԻ» ՓԱՌԱՏՈՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Երևան 2015

Իրավաբանական անձի պետական գրանցման
ՎԿԱՅԱԿԱՆ N 03Ա 173710

Իրավաբանական անձի անվանումը
«ԱՐԵՆԻ» ՓԱՌԱՏՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

Գրանցված է Պետական ռեգիստրի
Կենտրոնական մարմնի կողմից

Պետական գրանցման համարը **222.160.23710**
Պետական գրանցման ամսաթիվը **2011-06-13**
Իրավաբանական անձի ծածկագիր(կոդը) **39401146**
Հարկ վճարողի հաշվառման համար **02600057**
Իրավաբանական անձի տեսակը **ոչ առևտրային**
Գործունեության ժամկետը՝ մինչև **անժամկետ**

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ՝

(ստորագրություն)

Կ.Տ. "13" 06 2011 թ.

Վկայականն ուժի մեջ է միայն ներդիրի հետ միասին

ՆԵՐԴԻՐ 001

Իրավաբանական անձի պետական գրանցման
N 03Ա173710 վկայականի

Իրավաբանական անձի անվանումը **«ԱՐԵՆԻ» ՓԱՌԱՏՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ**

Գտնվելու վայրը **Չարենցի / 1 ք. Երևան, 0025 Հայաստան**

Իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավար,
Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝
ՆՈՒՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ
անձնագիր **AK0534630**, տրվ. **2010-06-18, 004** կողմից,
հասցե **Վրացական փող. / 21 շ. / բն. 60 ք. Երևան, 0051 Հայաստան**

Իրավաբանական անձի իրավանախորդի անվանումը և գրանցման համարը —

Այլ տեղեկություններ —

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրություն)

"13" 06 2011 թ.

Ներդիրն ուժի մեջ է միայն վկայականի հետ միասին

ՆԵՐԴԻՐ 002

Իրավաբանական անձի պետական գրանցման
N 03Ա173710 վկայականի

Իրավաբանական անձի անվանումը **«ԱՐԵՆԻ» ՓԱՌԱՏՈՆ»**
ՀԻՄՆԱԴՐԱՄ —

Գտնվելու վայրը —

Իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավար, **Տնօրեն**
ՆՈՒՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ
անձնագիր **ԱԿ0534630**, տրվ. **2010-06-18, 004** կողմից,
հասցե **Վրացական փող. / 21 շ. / բն. 60 ք. Երևան, 0051**
Հայաստան

Իրավաբանական անձի իրավանախորդի անվանումը և
գրանցման համարը —

Այլ տեղեկություններ
Տնօրենի մասին տեղեկությունների փոփոխություն
Փոփոխություն(ներ)ը գրանցվել է(են) 2012-01-30-ին

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրություն)

Կ.Տ.

30 01 2012 թ.

Ներդիրն ուժի մեջ է միայն վկայականի հետ միասին

ՆԵՐԴԻՐ 003

Իրավաբանական անձի պետական գրանցման
N 03Ա173710 վկայականի

Իրավաբանական անձի անվանումը **«ԱՐԵՆԻ» ՓԱՌԱՏՈՆ»**
ՀԻՄՆԱԴՐԱՄ —

Գտնվելու վայրը —

Իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավար —

Իրավաբանական անձի իրավանախորդի անվանումը և
գրանցման համարը —

Այլ տեղեկություններ
Կանոնադրության փոփոխություն:
Փոփոխություն(ներ)ը գրանցվել է(են) 2012-02-28-ին

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրություն)

Կ.Տ.

28 02 2012 թ.

Ներդիրն ուժի մեջ է միայն վկայականի հետ միասին

Հետաքրքրվածության նամակ

Զբոսաշրջության կայուն զարգացումը կարևորվում է յուրաքանչյուր զբոսաշրջային կենտրոնի երկարաժամկետ հաջողության համար, քանի որ զբոսաշրջային արդյունաբերությունն ուղղակիորեն կախված է շրջակա միջավայրի որակից, տեղական մշակույթից ու բնակիչներից:
Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզը աշխարհի հնագույն բնօրրաններից է: Տեղանքն ամբողջ աշխարհին հայտնի է իր բազմադարյան գինեգործության պատմությամբ, որի մասին փաստում են հայտնաբերված հնագույն գտածոներն ու դարերից եկող ավանդույթները:
Վայոց Ձորի մարզը՝որպես ներդրումների համար կայուն և ապահով, զբոսաշրջության համար գրավիչ պատմամշակութային շրջան, միջազգային զբոսաշրջային շուկային բազմաբնույթ, մրցունակ զբոսաշրջային արդյունք և բարձրակարգ ծառայություններ առաջարկելու մեծ ներուժ ունի:
Այս ենթատեքստում կարևոր է շեշտը դնել գինեգործության և գինու զբոսաշրջության զարգացման վրա, որի համար նախադրյալները մարզում բավական մեծ են:
Մարզում զբոսաշրջության և գինեգործության հետագա զարգացումը պահանջում է նախևառաջ տեղանքում համապատասխան ռեսուրսների արդյունավետ օգտագործում, ավելի բարձր որակավորված աշխատուժ և ավելի մեծ ներդրումներ, ինչն էլ իր հերթին հնարավորություն կտա մարզի համար մշակել և իրագործել համալիր կայուն զարգացում ակնկալող ռազմավարություն :

Արդեն հինգ տարի է,ինչ «Արենի» փառատոն» հիմնադրամը համագործակցում է ՀՀ Գյուղատնտեսության նախարարության հետ,անցկացնելով Վայոց Ձորի մարզի գինու փառատոնի շրջանակներում անցկացվող տնական գինիների համտես-ստուգարքը Արենի և Ռինդ համայնքներում: Այս բոլոր միջոցառումները նպաստումեն գինեգործության և տուրիզմի զարգացմանը Հայաստանում:Այստեղ հետաքրքրությունները համընկնում են պահանջարկի հետ:

Ուստի կարծում ենք, որ մեր ներգրավվածությունը ՀՀ Գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում նպատակահարմար է:

Ամփոփ տեղեկանք “ԱՐԵՆԻ”ՓԱՌԱՏՈՆ” ՀԻՄՆԱԴՐԱՄԻ վերջին 2 տարում ծավալած գործունեության վերաբերյալ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Հիմնադրամը հիմնվել է 2010 թվականին՝ Արենի համայնքի և Հայաստանի Հանրապետության Համայնքների միության կողմից:

Հիմնադրամի ստեղծման նպատակը շահագրգիռ կողմերի փորձի (նյութերը կցվում են), կարողությունների, գիտելիքների միավորմամբ համակցված ինստիտուցիոնալ համակարգի ձևավորումն ու զարգացումն է, որը գործելու է ի նպաստ.

- համայքներում՝ ավանդույթների արժևորմանը, վերականգնմանը, զարգացմանը,
- համայքներում՝ զբոսաշրջային ռեսուրսների համակարգմանն ու գնահատմանը,
- համայնքների ավանդույթներին, առանձնահատկություններին ու զբոսաշրջային ռեսուրսներին համապատասխան՝ մրցունակ զբոսաշրջային արդյունքների ձևավորման ներկայացմանն ու խթանմանը՝ միջազգային և ներքին շուկայում,
- համայքներում՝ զբոսաշրջության զարգացմանը,
- գյուղական համայնքներում ոչ գյուղատնտեսական աշխատատեղերի ստեղծմանը և ավելացմանը,
- Հայաստանում համայնքներում տարածքային համաչափ տնտեսական զարգացմանը,
- համայքներ այցելող զբոսաշրջիկների թվաքանակի կայուն աճին,
- տեղական և օտարերկրյա զբոսաշրջային շուկաներում փառատոնները՝ որպես կայացած և ճանաչելի զբոսաշրջային արդյունք ներկայացմանը,

- ավանդույթների ու սովորույթների վերականգնմանն ու պահպանմանը խթանմանը,

ՓԱՌԱՏՈՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

"Արենի Փառատոն" հիմնադրամն ունի տարատեսակ փառատոնների կազմակերպման երկարամյա փորձ, ինչպիսիք են՝ Գինու փառատոնը Արենիում, Արհեստների և Արվեստների փառատոնը Գյումրիում: Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2014 թվականին հիմնադրամն ավանդաբար նախատեսում է կազմակերպել.

- «Սյունաց բարիքներ» փառատոնը Գորիսում,
- «Թթի» փառատոնը ԼՂՀ-ում
- *«Գաթա»-ի փառատոնը՝ սահմանամերձ Խաչիկ գյուղում*
- Արհեստների և Արվեստների փառատոնը Գյումրիում,
- Գինու փառատոնը Արենի, Ռինդ, Եղեգնաձոր եւ շրջակա համայնքներում

Հիմնադրամն աջակցել է և շարունակելու է աջակցության ու համագործակցության ավանդույթը նաև Հայաստանի տարբեր համայնքներում կազմակերպվող հետևյալ փառատոնների և ազգային տոնածիսական միջոցառումների գործունեությանը.

- Տոլմայի փառատոն - ՀՀ Արմավիրի մարզի Սարդարապատ համայքնում,
- Խորովածի փառատոն - ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայքնում,
- "Հացը Լեռներում" փառատոնին՝ Երևան համայնքում,
- "Նավասարդ" ամենամյա փառատոնին՝ Գեղարքունիքի մարզի Ծաղկունք գյուղում:

Արենիում անցկացվող ամենամյա Գինու փառատոնը տարեցտարի ավելի մեծ ճանաչում է ձեռք բերում՝ այդ օրերին տարածաշրջանը դարձնելով Հանրապետության ամենաակտիվ զբոսաշրջային կենտրոններից մեկը: Փառատոնի շնորհիվ Հայաստանը և մասնավորապես Արենի համայնքն ու հարակից համայնքները միջազգային և ներքին զբոսաշրջային շուկայում հանդես են գալիս որպես գրավիչ զբոսավայր՝ հատկապես, որպես գինեգործության բնօրրան և միջազգային գինու ճանապարհի կարևորագույն բաղկացուցիչ մաս: Գինու փառատոնը նպաստում է Վայոց Ձորի մարզի ողջ տարածշրջանի զբոսաշրջության զարգացմանը, ինչպես նաև խաղողագործության զարգացմանը քաջ գիտակցելով, որ խաղողագործության զարգացումը մեր երկրի գյուղատնտեսության ոլորտի հեռանկարային ճյուղերից է:

Փառատոնի ամենամյա պարբերականության ու շարունակականության շնորհիվ՝ լայն արձագանք է ստացել և հռչակվել ոչ միայն Հայաստանի բնակչության, այլ նաև մի շարք երկրների զբոսաշրջիկների և տուրիստական կազմակերպությունների կողմից: Հատկանշական է, որ գինու փառատոնին մասնակցող զբոսաշրջիկների թիվը տարեցտարի ավելանում է, որն իր հերթին նպաստում է փառատոնի անցկացման վայրերում և հարևան մարզերում գիշերակացների համար հատկացվող տեղերի ավելացմանը: Ըստ անցկացված մոնիթորինգի արդյունքների, այս տարի Սյունիքի մարզում գինու փառատոնի շրջանակներում տեղացի զբոսաշրջիկների թիվը էապես ավելացել է, քանի որ փառատոնի այցելուները շարունակել են ճանապարհը դեպի Ջերմուկ, Գորիս և Տաթևի վանք, ինչը նպաստել է հարևան մարզերում գիշերակացների համար նախատեսվող վայրերի ավելացմանն ու զբաղվածությանը:

Փառատոնը բարձր մակարդակով կազմակերպելու և հայկական գինեգործությունը զարգացնելու նպատակով, նախքան փառատոնի մեկնարկը՝ դրսից ժամանած մասնագետ-հյուրերը 5 օր ուսումնասիրում են տեղի շուկան և տվիս են արժեքավոր խորհրդատվություն կապված փառատոնի կազմակերպչական հարցերի և փառատոնի ընթացքում ձևավորված համագործակցային ու շուկայական փոխհարաբերությունների արդյունավետության բարձրացման հետ:

Ինչ վերաբերում է հիմնադրամի առաքելությանը, ապա դա ոչ միայն փառատոնների միջոցով տարածաշրջանի զբոսաշրջային զարգացմանը, իմիջի ձևավորմանը և հանրահռչակմանը նպաստելն է, այլ նաև տարածաշրջանի բնակչության ինստիտուցիոնալ կարողությունները զարգացնել է: Նպատակի արդյունավետ իրականացման համար կարևորվում է Փառատոնի ինստիտուցիոնալացման ու կայուն զարգացման միջոցով բոլոր շահագրգիռ կողմերի համախմբումը:

Հիմնադրամի նպատակներից է նաև փառատոների շնորհիվ Հայաստանի համայնքների համաչափ զարգացմանը նպաստելը: Նպատակին հասնելու կարևորագույն նախապայմաններից է յուրաքանչյուր տարածաշրջանի առանձնահատուկություններն ընդգծող թեմատիկ փառատոների անցկացումը: Հայաստանի յուրաքանչյուր շրջան ունի իր խորհրդանիշը, որով ընդգծվում է տվյալ վայրի յուրօրինակությունը:

« ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ գյուղատնտեսության ոլորտում 2015 թվականին գրանցվել են դրական տեղաշարժեր: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով 2015 թվականի հունվար-նոյեմբերին գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքը կազմել է 931.40 մլրդ դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 11.6 %-ով:

Հաշվետու տարում շարունակվել են դրական տեղաշարժերը հողային ռեսուրսների, մասնավորապես վարելահողերի օգտագործման բնագավառում: Վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը 2015 թվականին կազմել է 78.6 %, 2014 թվականի 74.4 %-ի դիմաց:

Գյուղատնտեսությունում կոոպերացիայի խթանում: Մշակվել և ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է **«Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքը:** Նախարարության խորհրդատվական համակարգի միջոցով շարունակվել է աջակցությունը գյուղատնտեսական գործունեություն իրականացնող կոոպերատիվների ձևավորմանը և գործունեությանը: Մասնավորապես, 2015 թվականին աջակցություն է ցուցաբերվել թվով 22 գյուղատնտեսական կոոպերատիվի ձևավորմանը: «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» վարկային ծրագրի շրջանակներում հանրապետության 8 մարզում ստեղծվել է շուրջ 52 արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվ:

Գյուղատնտեսության ոլորտի մատչելի վարկավորում: Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ կառավարության կողմից հաստատված կարգին համապատասխան՝ գյուղատնտեսության ոլորտին տրամադրվել են մատչելի տոկոսադրույքով (14 %-ով) վարկեր, որոնց 6 տոկոսային կետը սուբսիդավորվել է: 2011 թվականի ապրիլի սկզբից մինչև 2015 թվականի հոկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում գյուղատնտեսությունում տնտեսավարողներին տրամադրվել է 77.3 մլրդ դրամի 88.8 հազ. միավոր վարկ: Ընդհանուր առմամբ, վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման գումարը կազմել է 3.21 մլրդ դրամ: 2015 թվականի ընթացքում տրամադրված վարկերի գումարը կազմել է շուրջ 15.2 մլրդ դրամ:

Գյուղատնտեսական հումքի մթերում, իրացում: 2015 թվականին գյուղատնտեսական մթերք վերամշակող ընկերությունների կողմից մթերվել է 43.5 հազ. տոննա բանջարեղեն, որը գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը 27.6 %-ով, իսկ պտղի մթերումների ծավալը կազմել է 20.6 հազ. տոննա, որն ավելին է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից 48.3 %-ով: 2015 թվականին մթերվել է 216.8 հազ. տոննա խաղող, որը գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը 32.7 հազ. տոննայով: 2015 թվականին հանրապետությունից արտահանվել է 76.7 հազ. տոննա պտուղբանջարեղեն, խաղող և կարտոֆիլ, այդ թվում՝ 34.4 հազ. տոննա պտուղ և հատապտուղ, որից՝ 21.3 հազ. տոննա ծիրան: Խաղողի արտահանման ծավալը կազմում է 13.1 հազ. տոննա, նախորդ տարվա 8.0 հազ. տոննայի դիմաց: Ընդհանուր առմամբ, արտահանման ծավալները գերազանցում են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 65.1 %-ով: Ռուսաստանի Դաշնության բաժինը կազմում է արտահանման ընդհանուր ծավալի 83.4 %-ը, 2014 թվականի 46.4 %-ի դիմաց:

Գիտության և խորհրդատվության ոլորտներ: Նախարարության գիտական կազմակերպությունների կողմից հետազոտությունները հիմնականում ընթացել են գյուղատնտեսական մշակաբույսերի սելեկցիայի, սերմնաբուծության, համաշխարհային հավաքածուներից և գյուղատնտեսական հետազոտությունների միջազգային կենտրոնների սելեկցիոն տնկարաններից ստացված սորտերի, հիբրիդների ու սելեկցիոն գծերի, ինչպես նաև ոչ ավանդական մշակաբույսերի փորձարկման ու սելեկցիոն նպատակներով օգտագործման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում նախարարության խորհրդատվական համակարգի կողմից կազմակերպվել և անցկացվել է 1091 սեմինար և 847 դաշտային ուսուցում, իրականացվել է 21.5 հազ. խորհրդատվական միջոցառում, 149 փորձացուցադրական աշխատանք, եթեր է հեռարձակվել 94 ռադիոհեռուստա– հաղորդում: Տպագրվել և տարածվել է 447 անուն խորհրդատվական թերթիկ և գրքույկ՝ 128.1 հազ. Ընդհանուր տպաքանակով: Թողարկվել է 156 համար թերթ՝ 207.5 հազ. ընդհանուր տպաքանակով: **Վարկային ծրագրեր**

«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» առաջին և երկրորդ ծրագրերի շրջանակներում 2015 թվականի ընթացքում կատարված հիմնական աշխատանքներ

Առաջին ծրագրի Համայնքների արոտավայրերի և անասնապահության կառավարման համակարգ բաղադրիչի շրջանակներում 2015թ. կատարվել են հետևյալ աշխատանքները՝ ՀՀ 6 մարզի (Արագածոտն, Լոռի, Շիրակ, Տավուշ, Գեղարքունիք, Սյունիք) ծրագրով նախատեսված 55 համայնքի փոխարեն աշխատանքներ են իրականացվում լրացուցիչ ևս 26 համայնքում, 13 համայնքում արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքներն ավարտվել են (34.5 կմ ջրագիծ, 33 հատ խմոց), 1 համայնքում արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքները գտնվում են իրականացման փուլում (10 կմ ջրագիծ, 2 հատ խմոց), 38 համայնքի արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներին տրամադրվել է շուրջ 120 միավոր գյուղտեխնիկա, այդ թվում 9 անիվավոր տրակտոր և 111 միավոր այլ գյուղգործիքներ, 6 մարզի 21 համայնքներում (ընդամենը՝ 2665 մարդ) իրականացվել է ուսուցում, 55 համայնքի շուրջ 218 հա արոտներում ավարտվել են դեգրադացված տարածքների վերականգնողական աշխատանքները և այլն:

Երկրորդ ծրագրի համանուն բաղադրիչով 2015թ. կատարվել է հետևյալ աշխատանքները՝ ընդգրկվել է ՀՀ 8 մարզի (Արագածոտն, Գեղարքունիք, Լոռի, Կոտայք, Շիրակ, Սյունիք, Վայոց ձոր, Տավուշ) 55 համայնք, 52 համայնքում հիմնադրվել են «Արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներ, 6 համայնքում արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքներն ավարտվել են (4.7 կմ ջրագիծ, 15 հատ խմոց), 11 համայնքում արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքները գտնվում են իրականացման փուլում (41.6 կմ ջրագիծ, 29 հատ խմոց), 14 համայնքի արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներին տրամադրվել է շուրջ 80 միավոր գյուղտեխնիկա, այդ թվում 22 անիվավոր տրակտոր և 58 միավոր այլ գյուղգործիք: Աշխատանքներ են իրականացվել նաև «Գյուղատնտեսությանն աջակցող ծառայությունների հզորացում», «Մրցակցային դրամաշնորհների ծրագիր», «Արժեշղթայի զարգացում» բաղադրիչներով:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության 2015 թվականի գործունեությունն ուղղված է եղել ոլորտի գերակա ուղղություններին համապատասխան աշխատանքների իրականացմանը, ընթացիկ հիմնախնդիրների լուծմանը: